ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

GOUVERNEMENT
D'ARMENIE OCCIDENTALE

BATI ERMENISTAN
HUKUMETI

ПРАВИТЕЛЬСТВО
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Մամլո հաղորդագրություն
Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության

Մեր հայրենակիցներին տեղեկացնում եւ զգուշացնում ենք, որ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը ոչ մի կապ եւ առընչություն չունի՝ **«Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն, Մայնց, Գերմանիա»** ինքնակոչ կառույցի կողմից բացված գրասենյակների եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիության անձնագրեր տրամադրելու վերաբերյալ գործողությունների հետ եւ, ըստ այդմ, հասկանալի պատճառներով, որեւէ պատասխանատվություն չի կրում այդ կառույցի գործողությունների հետեւանքների հետ կապված. ոչ ֆինանսական, ոչ իրավական, ոչ քաղաքական եւ ոչ էլ բարոյական իմաստով:

Տեղեկացնում ենք նաեւ, որ վերոհիշյալ ինքնակոչ կառույցին մաս կազմող հետեւյալ անձինք՝ Արամ Մկրտչյանը, Կարինե Հայրապետյանը, Հրայր/Սուրիկ Ղազարյանը, Բակուր Կարապետյանը, որեւէ կապ եւ առընչություն չունեն Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ողջ պետական համակարգի հետ:

Հրաչ Փիլիպոսյան
Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության
Ֆինանսների եւ զարգացման նախարար

19.09.2014 թ.

stat.gov.wa@haybachdban.org